ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2016թ. թիվ 433-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 9, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 24.11.2016թ. գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի կազմում վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Արմինե Օհանյանի թեկնածությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. նոյեմբերի 29
ք.Վանաձոր